ԱՆՆԱ ԱԲԱՋՅԱՆ

ԱՆՀԱՄԱՍԵՌ ՈՐՈՇԻՉՆԵՐԸ ԲԱԿՈՒՆՑԻ ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐՈՒՄ

Որոշիչների համասեռության և անհամասեռության հարցը հայ քերականագիտության մեջ քիչ ուշադրության արժանացած հարցերից է, ուստի հաճախ տեղիք է տալիս լուրջ վեճերի:

Սույն աշխատանքում կփորձենք, մեր ուժերի չափով, հստակեցում մտցնել այդ հարցում: Որպես աղբյուր են ծառայել Ակսել Բակունցի «Մթնածոր» և «Սև ցելերի սերմնացանը» պատմվածաշարերը: Քաղված նյութի հիման վրա կազմել ենք քարտարան՝ բաղկացած 372 օրինակներից:

Հայտնի է, որ որոշիչը գոյականի կամ գոյականական անդամի այնպիսի լրացում է, որը ցույց է տալիս որակական, վիճակային և այլ հատկանիշ: Այն կարող է արտահայտվել նախ և առաջ ածականով, թվականով, դերանվամբ /խոսքը ածական դերանունների մասին է/, հարակատար, ենթակայական, ապառնի II /իք/ դերբայներով, անորոշի սեռական – տրականով, գոյականով, ինչպես նաև կապական կապակցությամբ, բառակապակցությամբ: Նշենք, որ <u>շեշտանի</u> , <u>հաճախակի</u> և նման որոշիչները մենք համարել ենք ոչ թե մակբայ, այլ ածական, թեպետ մի շարք լեզվաբաններ գտնում են, որ մակբայը նույնպես կարող է դառնալ որոշիչ: Օրինակ՝ մի քանի շեշտակի հարցեր /էջ 201[1] /:

Ինչպես իրավացիորեն նշում է պրոֆ. Մ. Ասատրյանը, «Հենց այն հանգամանքը, որ ընթացք կամ շարժում բայանունների վրա որպես որոշիչ դրվում է <u>անսպասելի</u> ածականը, իսկ <u>անսպասելիորեն</u> սոսկ մակբայական նշանակություն ունեցող բառը դրվել չի կարող, ցույց է տալիս, որ արագ ընթացք, հաճախակի հանդիպում, հանկարծակի վերադարձ և նման այլ կապակցությունները «ածական + գոյական» կապակցություններ են, և դրանցում լրացումներն ունեն ածականական իմաստ»[2]:

Նույն որոշյալին լրացնող 2 և ավելի որոշիչները կոչվում են բազմակի, որոնք լինում են համասեռ և անհամասեռ:

Համասեռ են կոչվում այն որոշիչները, որոնք արտահայտում են նման հատկանիշներ, իմաստային մոտ դաշտերով են բնութագրում տվյալ որոշյալը:

Անհամասեռ են կոչվում այն որոշիչները, որոնք արտահայտում են տարբեր հատկանիշներ՝ տվյալ որոշյալը բնութագրելով իմաստային հեռու դաշտերով: Իմաստային առանձնահատկություններից զատ՝ համասեռ և անհամասեռ որոշիչները տարորոշելու համար պետք է նկատի ունենալ հետևյալ հանգամանքը.

1/ համասեռ որոշիչները արտաբերվում են թվարկման հնչերանգով, դադարներով, որը գրավոր խոսքում արտահայտվում է ստորակետով,

2/ անհամասեռ որոշիչներն արտաբերվում են առանց դադարի. թվարկման հնչերանգը բացակայում է: Գրավոր խոսքում նրանց միջև ստորակետ չի դրվում: Գոյություն ունի անհամասեռ և համասեռ որոշիչների զանազանման հեշտ ու դյուրին մի տարբերակ. եթե որոշիչների միջև հնարավոր է՝ և համադասական շաղկապի ներմուծումը, ապա որոշիչները համասեռ են, իսկ եթե անհնարին է, ապա գործ ունենք անհամասեռ որոշիչների հետ, օրինակ՝ գեղեցիկ, հմայիչ կին → գեղեցիկ և հմայիչ կին, լեռնային քնքուշ ծաղիկ → լեռնային /և/ քնքուշ ծաղիկ:

Ճնշող մեծամասնությամբ համասեռ որոշիչներն արտահայտված են նույն խոսքի մասերով, օրինակ՝ դեղին, սպիտակ վարդեր /էջ 97/, բարակ, նիհար շներ /էջ 176/, խանձված, սևացած դիակ /էջ 49/, ծռված, կռացած կաղնիներ /էջ 77/, անդուրեկան, ծանր հոտ /էջ 83/ և այլն:

Իհարկե, չեն բացառվում նաև այն դեպքերը, երբ համասեռներն արտահայտված լինեն տարբեր խոսքի մասերով, օրինակ՝ ածական + հառանատան կաղապարով՝ մեղմ, զսպված հեծկլտանք /էջ 39/:

«Մթնածոր» և «Սև ցելերի սերմնացանը» պատմվածաշարերում Ա. Բակունցը կիրառում է բազմակի որոշիչների 372 օրինակներ, որոնցից 355-ը անհամասեռ են, իսկ 17-ը՝ համասեռ:

Ինչպես երևում է, համասեռ որոշիչները անհամասեռների նկատմամբ չնչին թիվ են կազմում:

Անհամասեռ որոշիչների քանակը շատ կմեծանար, եթե նրանց մեջ ընդգրկեինք մի անորոշ դերանուն + ածական կամ դերբայ կաղապարով երկբաղադրիչ լրացումները:

Նշենք, որ մի խումբ բառերի հետ գործածվելիս մի _/մեկ/ բառը կատարում է ընդգծող, առանձնացնող դեր՝ կորցնելով իր անորոշության իմաստը կամ թվական նշանակությունը: Այդ բառերից են ուրույն, առանձնահատուկ, ինքնատիպ, ուրիշ, յուրօրինակ և այլն: Օրինակ՝ «Մի ուրույն աշխարհ է Մթնածորը»:

Գրողը անհամասեռ որոշիչների 16 օրինակներ է կիրառել, որոնցում որոշիչներն անջատված են ստորակետերով: Ստորև ներկայացնում ենք դրանցից մի քանիսը՝ պահպանելով հեղինակի կետադրումը. լուսավոր, ընդարձակ սենյակներ /էջ 205/, շինելն ուսին, հաղթանդամ մի տղամարդ /էջ 43/, քափ-քրտինքի մեջ կորած, արյունլվա մարդ /էջ 29/, երկար, հնամաշ տրեխներ /էջ 125/, բարակ, կարմիր շրթունքներ /էջ 126/, փոքրիկ, ջրակալած աչքեր /էջ 134/, երկար, ծալվեծալ բաշ /էջ 227/, չարքաշ, պղնձագույն դեմք /էջ 65/, տեղ-տեղ փոս ընկած, ճաքճքած միս /էջ 226/, մեջքը փոս ընկած, մոխրագույն մի ձի /էջ 228/:

Պատահում են անհամասեռ որոշիչների 8 օրինակներ, որոնք ունեն և կամ ու համադասական շաղկապը: Բերենք այդ նմուշները. կանաչ ու մանրիկ պտուղներ /էջ 125/, անվախճան և անքննելի զրույց /էջ 80/, մաքուր և սառը ջուր /էջ 67/, մանր և ցցված հողակտորներ /էջ 145/, հաստ ու կարմիր շրթունքներ /էջ 170/, սպիտակ և բարձրահասակ եզներ /էջ 241/, երկար և սև արտևանունքներ /էջ 238/, չոր և հազար սմբակի տակ տրորած խոտ /էջ 222/:

Վերջին օրինակի մասին՝ առանձին:

Ինչպես արդեն նշել ենք, անհամասեռ որոշիչների միջև չի դրվում ստորակետ: Սակայն սա պետք է վերապահությամբ ընդունել այն ժամանակ, երբ հնարավոր է իմաստաշփոթության առաջացում: Մեզ հանդիպել են այդպիսի 6 օրինակներ, որոնցում հեղինակը իրավացիորեն անհամասեռները անջատել է ստորակետով. ծրարած, հասցեն ծրագի վրա չորացրած նամակներ /էջ 106/, կարճլիկ, մազը սպիտակ պապի /էջ 159/, լղար, մեջքը փոս ընկած մի

ձի /էջ 228/, բոբիկ, արևից խանձված ոտքերով /էջ 127/, փոքրիկ, բզով ծակած աչքեր /էջ 93/, խուլ, յոթ սարի ետևում պահված գյուղ /էջ 91/:

Նման դեպքերում լուծման մի այլ տարբերակ է որոշիչների տեղափոխումը. օրինակ՝ բզով ծակած փոքրիկ աչքեր, մեջքը փոս ընկած մի լղար ձի, մազը սպիտակ կարճլիկ պապի, հազար սմբակի տակ տրորած չոր խոտ և այլն:

Այժմ անհամասեռ որոշիչները քննենք 3 տեսանկյունով՝

ա/ ըստ բաղադրիչների խոսքամասային պատկանելիության,

բ/ ըստ բաղադրիչների թվի,

գ/ ըստ շարադասության:

Ա. Անհամասեռ որոշիչների խոսքամասային պատկանելիությունը

Բնագրից քաղված անհամասեռ որոշիչների 372 օրինակներում, ըստ այս կամ այն խոսքի մասին պատկանելու հատկանշի, առկա են հետևյալ կաղապարները՝

ածական + ածական

ածական + դերանուն

ածական + դերբայ /կամ դերբայական դարձված/

գոյական /կամ գոյ. բառակապակցություն/ + ածական

թվական + ածական

դերբայ + դերանուն

դերբայ /կամ դերբ. դարձված/ + թվական

դերբայ /կամ դերբ. դարձված/ + դերբայ

դերբայ + գոյական

գոյական /կամ գոյ. բառակ./ + գոյական

թվական + գոյական

դերանուն + թվական

դերանուն + դերանուն

թվական + թվական

ա/ <u>Ածական +ածական</u>

Այս կաղապարներն ունեն անհամասեռ որոշիչների 70 օրինակներ, որոնցից առանձնացրել ենք հետևյալ մանրակաղապարները.

1.որակական ածական+հարաբերականածական /կամ հակառակը/ /թվով 34/.

կաշվե սև գոտի /85/, չարքաշ պղնձագույն դեմք /65/, պիտակ թիթեղյա տուփ /140/, պողպատե փայլուն մանգաղ /142/, նոյեմբերյան պարզ գիշերներ /251/, կավե հին պատեր /245/,

2. որակական ածական + որակական ածական /թվով 34/. փոքրիկ սև կետեր /116/, պղտոր դեղին գետեր /149/, բարձր սպիտակ ճակատ /139/, լուսավոր ընդարձակ սենյակներ /205/, բարակ կարմիր շրթունքներ /126/,

3.հարաբերական անածական+հարաբերական ածական /ունենք երկու օրինակ/. ալպիական ծիրանագույն մանուշակներ /141/, նաիրյան հոգևոր կուլտուրա /231/,

բ/ <u>Ածական + դերանուն</u> կաղապարով համասեռ որոշիչների թիվը ամենամեծն է՝ 99-ը: Որպես որոշիչ՝ հանդես են եկել ցուցական, անորոշ, որոշյալ, հարաբերական և ժխտական դերանունները:

Անորոշ դերանուն + ածական կաղապարով են կազմված 12 օրինակներ.

ինչ-որ քաղցր բույր /234/, այլ անպետք մանրուք /197/, ուրիշ շատ զգացումներ /181/, ուրիշ մութ բան /197/, մի քանի միամիտ գյուղացի /69/:

Հարաբերական դերանուն + ածական կազմությամբ պատահում են 3 օրինակ.

ինչպիսի անլուծելի խնդիրներ /239/, ինչ ահեղ թափ /137/, որպիսի միամիտ պարզություն/125/:

Որոշյալ դերանուն + ածական կաղապարով հանդիպել է 2 օրինակ.

բոլոր քարաշեն տները /240/, գյուղական ամեն մի աշխատանք /84/:

Ժխտական դերանուն + ածական կաղապարով ունենք միայն 1 օրինակ.

ոչ մի օտար աղմուկ /241/:

Ցուցական դերանուն + ածական կաղապարով կազմությունները մեծ թիվ են կազմում, քանի որ ամենից շատ գործածվում են ցուցականները: Դուրս ենք գրել 79 օրինակ, ինչպես՝ այս բարձր լեռը /148/, այն կապույտ առվակները /149/, նույն բրդե շալը /121/, այնպիսի խաղաղ ժամ /197/ և այլն:

գ/ <u>Ածական + դեռբայ /կամ դեռբ. դարձված/</u> կաղապարով օրինակները թվով 66-ն են:

Իբրև որոշիչ՝ բնականաբար հանդես են գալիս հատկանշային նշանակություն ունեցող անկախ դերբայները՝ հարակատարը, ենթակայականը, ապառնի II-ը, անորոշի սեռական – տրականը:

Ամենամեծ թիվ են կազմում հարակատարով կազմությունները՝ 52 օրինակ, որոնցից 38-ում հարակատարը իր լրացումների հետ է /դերբ. դարձված/, իսկ 14-ում միայն դերբայն է: Օրինակներ՝ շույը վեր շարած լաջվարդ հալավ /74/, բեռների տակ կքած սև ստվերներ /229/, բեռան տակ մեծացած գյուղական ձի /225/, ընկած հաստաբուն գերաններ /31/, մաշված հնաձև վերարկու /241/, հոգնած բարակ ձայն /2/, կատաղած պղտոր գետ /198/,:

Ենթակայականով դերբայական դարձված + ածական կաղապարով կա 12 օրինակ, ինչպես՝ գետը տանող նեղ ճանապարհ /225/, խոտերի վրա հանգստացող սև եզներ /184/, մթնում հալվող սպիտակ շորեր /181/:

Անորոշի սեռական – տրական + ածական կազմությամբ ունենք ընդամենը 2 օրինակ, որոնք են՝ ուտելու քիչ խոտ /68/, ուսին գցելու հնամաշ կարպետ /56/:

Ապառնի II դերբայ + ածական կաղապարով օրինակ չկա նշված պատմվածաշարերում:

դ/ <u>Գոյական /կամ գոյականական բառակապակցություն + ածական/</u> կաղապարով դուրս ենք գրել 27 օրինակ:

Հայտնի է, որ գոյական որոշիչը կարող է դրվել ուղղական, սեռական – տրական, բացառական և գործիական հոլովներով:

Հանդիպել են 8 օրինակներ, որոնցից մեկ որոշիչն արտահայտված է գոյականի ուղղական հոլովով /կամ գոյակ. բառակապակցությամբ/, իսկ մյուսը՝ ածականով:

ա/ Որակական իմաստով, օրինակ՝ լեռնային լույս աղբյուրներ /149/, ծիրանի ոսկեգույն ծառ /181/, հարևան հաստաբուն ընկուզենի /34/, ծաղիկը ծիրանի գույն ալպիական մանուշակ /138/, քարե արծիվը՝ կտուցը կեռ թուր /135/:

բ/ Չափ ու քանակի իմաստով՝ մի կտոր չոր հաց /91/

գ/ Բացահայտող իմաստով ունենք՝ Մարութա բարձր սար /132/ օրինակը, որտեղ ունենք <u>Մարութա</u> քարացած հոլովածևը: Նմանատիպ օրինակ է <u>Վանա</u> կապույտ փիսոն /194/:

Գոյականի սեռական – տրական հոլով + ածական կաղապարով ունենք 13 օրինակ՝ ծերունու հուշիկ քայլ /81/, լեռան միամիտ աղջիկ /146/, սարի թարմ խոտ /214/, կաքավի մանր քայլ /74/:

Գործիականով բառակապակցություն + ածական կազմությամբ կա 5 օրինակ, ինչպես՝ բոբիկ ոտքերով շատ կանայք /104/, երկար զոլերով կարմիր ջիթ /120/, բոց աչքերով ժիր երեխաներ /118/:

ե/ Թվական + ածական կաղապարով ունենք անհամասեռ որոշիչների 17 օրինակներ, որոնցից 16-ում բացարձակ թվականներ են, իսկ մեկում դասական: Օրինակներ՝ երկու դատարկ տուփ /142/, չորս փոքրիկ աղջիկներ /150/, երկու բարակ ձեռքեր /174/, տպագիր առաջին լոզունգ /188/:

զ/ Դերբայ + ռեռանուն կաղապարով ունենք 8 օրինակ, որոնցից 7-ում հարակատար դերբայն է, 1-ում՝ ենթակայականը, օրինակներ՝ ամպամած այդ օրը /183/, հեռու ծորերում ընկած այդ գյուղը /115/, սպանած ոչ մի կենդանի /29/, գործարանները շտապող այս մարդիկ /235/:

է/ Դերբայ /դերբայական դարձված/ + թվական կաղապարով դուրս ենք գրել անհամասեռների 5 օրինակներ, ինչպես՝ ժայռերի մեջ կորած երկու մանուկներ /167/, նախրից ետ մնացած երկու հորթ /97/:

ը/ Դերբայական դարձված + դերբայ կազմությունները ևս հինգն են, օրինակ՝ հողի տակ թաղված տաշած քար /137/, պատից կախված մաշված գորգ /193/, արտերից վերադարձող հոգնած մարդիկ /182/:

թ/ Դերբայական դարձված + գոյական կաղապար /2 օրինակ/. տուրքի հետ կապված մի շարք խնդիրներ /94/:

ժ/ Գոյական /գոյականական բառակ./ + ռեռանուն կաղապարով ունենք 8 օրինակ. լույս ատամներով այն աղջիկը /74/, գանգուր մազերով այն կենդանին /167/:

ի/ Գոյական /գոյականական բառակ./ + գոյական կաղապար /5 օրինակ/. ողորմած հոգի Զաքի ապերը /35/, Դավիթի տղա գիմնազիստ Վանոն /182/:

լ/ Թվական + գոյական կաղապարով ունենք 4 օրինակ՝ երկու հարևան գյուղեր /66/, ֆետրե գլխարկով երկրորդ ծիավորը /136/:

Խ/ Ղեռանուն + թվական կաղապարով կա 3 օրինակ՝ այն երեք բարդին /242/, այն առաջին տպավորություն /116/:

ծ/ Ղեռանուն + ռեռանուն կաղապարով դուրս ենք գրել 2 օրինակ, որոնք են՝ այդ նույն դեզը /75/, ուրիշ ոչ մի զարդ /117/:

Կ/ Թվական + թվական կաղապարով հանդիպել է միայն 1 օրինակ՝ առաջին երկու ձիավորը /136/:

Բ. Ըստ բաղադրիչների թվի անհամասեռ որոշիչները ստորաբաժանել ենք 3 խմբի. ա/ երկբաղադրիչ, բ/ եռաբաղադրիչ, գ/ քառաբաղադրիչ:

Ամենամեծ խումբը կազմում են երկբաղադրիչ անհամասեռները՝ 372-ից 345-ը: Օրինակներ՝ փոքրիկ սև կետեր /116/, չորս լուսավոր սենյակ /93/, արծվի լալկան կանայք /88/, անթիվ փայլուն կոճակներ /163/, չքե հասարակ շապիկ /166/:

Եռաբաղադրիչ անհամասեռ որոշիչները 25-ն են, որոնք ներկայացնում ենք ամբողջությամբ. բնական այդ մեծ քարայրը /170/, նույն միջանցքում ապրող բարձրահասակ ռուս ուսանող /196/, երկաթի խեղդող մի կափարիչ /187/, գլխիվայր կախված մի չնաշխարհիկ արոտ /226/, էլ ուրիշ զարմանք բաներ /104/, մի մեծ տափակ քար /103/, հարևան մի քանի աղքատ տներ /94/, էլ ուրիշ ներկած դարպաս /92/, գյուղի մի խոնարհ աղջիկ /86/, էլի հազար ու մի պես-պես բաներ /86/, գունավոր թելերից մի նոր կարպետ /69/, թաքուն մի ուրիշ միտք /36/, հարևանի ուղարկած մի ազիզ կերակուր /34/, հովվական պարզ մի երգ /158/, քարակոփ այս բարձր շենքերում /209/, ծղոտից գործած մի չտեսնված գլխարկ /204/, արևելյան թախծոտ մի երգ /231/, նրա հետ կապված մի անանուն մարդ /234/, այդ թավ կրծքային ձայնը /167/, կարմիր, տեղ-տեղ փոս ընկած ճաքճքած միս /226/, մի կապտավուն ձի՝ երկար ծալվեծալ բաշով /227/, զինվորական մի խոհանոց՝ կաթսան ժանգոտած /92/, անտաշ քարեր՝ կարգով շարած, շրջանաձև /103/, մի վիթխարի տուն՝ լույսերով ողողված /243/, այն հողաշեն ակումբը՝ եղեգնյա կտուրով:

Մեզ հանդիպել է քառաբաղադրիչ անհամասեռների ընդամենը երկու օրինակ. շինելն ուսին բեղ ու միրուքով հաղթանդամ մի տղամարդ /43/, լղար, մեջքը փոս ընկած մոխրագույն մի ձի:

4-ից ավել բաղադրիչով անհամասեռ որոշիչների օրինակ բնագրում մեզ չի հանդիպել, թեպետ չի բացառվում նրա կազմությունը: Օրինակ՝

նուն միջանցքում ապրող բառծռահասակ բուս ուսանող - ից կարող ենք կազմել նուն միջանցքում ապրող բառծռահասակ անընդհատող բուս ըսանամյա պարկեշտ ուսանող կապակցությունը, որն ունի 6 անհամասեռ որոշիչներ: Նման օրինակներ, իհարկե, հազվադեպ են պատահում, քանի որ արդյունքում ստացվում է բավական ծանր ոճ: Ցանկալի է նման դեպքերում որոշիչների մի մասը տանել որոշյալից հետո:

Գ. Անհամասեռ որոշիչները իրենց որոշյալի նկատմամբ կարող են լինել նախադաս, հետադաս կամ խառը՝ 2-ը միաժամանակ:

346 օրինակներում որոշիչները նախադաս են, 26-ում որոշիչներից մեկը հետադաս է, մյուսը՝ նախադաս /ընդ որում, 17-ում հետադաս որոշիչը որոշյալից անջատված է ստորակետով, իսկ 9-ում՝ բութով. պարզ է, որ բոլորն էլ պետք է տրոհվեին բութով/: Օրինակ՝ ալպիական մանուշակ, ծաղիկը ծիրանի գույն /138/, երկու տերև՝ չոր ու գորշ /144:

Միայն հետադաս անհամասեռներով որոշյալ մեզ չի հանդիպել:

Ունենք 5 օրինակներ, որոնցում որոշիչներից երկուսը համասեռ են իրար նկատմամբ և հետադաս, իսկ մեկ անհամասեռը դրանց նկատմամբ նախադաս է, ինչպես՝ հատուկենտ կաղնիներ՝ ծռված, կռացած /77/, նոր շորերով՝ կարմիր, կապույտ /121/, վայրի վարդեր՝ դեղին, սպիտակ /97/, երկու փետուր՝ դեղնավուն, սև պուտերով /99/, կայծակնահար դիակը՝ խանձված, սևացած /49/:

Հետադաս դիրքում անհամասեռ որոշիչները արտաբերվում են թվարկման ինչերանգով, ուստի նրանց միջև պետք է ստորակետ նշանակել, ինչպես՝ գլխարկը՝ մոոթե, վիթխարի:

Սովորաբար հետադաս դիրքում որոշիչները պետք է լինեն թվով առնվազն 2-ը /ինչպես վերոհիշյալ նմուշը/, իսկ 1-ին դեպքում այն կարող է արտահայտվել բառակապակցությամբ, դերբայական դարձվածով. մանուշակը՝ ծառիկո ծիրանի գույն /138/, քարեր՝ կարոգով շարած /103/:

Սակայն պատահում են դեպքեր, երբ հետադաս 1 որոշիչը անջատվում է բութով: Դա նշանակում է, որ հեղինակը ցանկանում է շեշտել, ընդգծել տվյալ հատկանիշը: Օրինակ՝ արցունքից կարմրած աչքերը՝ <u>սաւծառ</u> /75/:

Այսպիսով, ամփոփելով ասվածը, կարելի է հանգել այն եզրակացությանը, որ համասեռ և անհամասեռ որոշիչների տարբերակման հարցում պետք է նկատի ունենալ 2 հանգամանք՝ հնչերանգը և իմաստը:

Եթե որոշիչներից մեկը արտահայտված է թվականով, դերանվամբ, գոյականով կամ անորոշ դերբայի սեռական-տրական հոլովով, ապա անկասկած գործ ունենք անհամասեռ որոշիչների հետ:

Նույնը վստահ կարող ենք ասել <u>հառաբեռական ածական + ոռանական ածական</u> կաղապարով կազմությունների մասին: Մնացած դեպքերում հնարավոր են տարբեր ընկալումներ ու մոտեցումներ:

Շատ անգամ դժվար է համասեռը տարբերել անհամասեռից: Դա գալիս է նրանից, որ որակական ու հարաբերական ածականների սահմանը հարաբերական է ու շարժուն, և նույն ածականը տարբեր կիրառություններում կարող է դրսևորվել տարբեր ձևերով: Այդ պատճառով գլխավոր առանձնահատկությունը մնում է հնչերանգը:

Բանավոր խոսքի արտասանական յուրահատկությունները և դադարները խթանում են մտքի ճիշտ հաղորդմանը, խոսողի զանազան վերաբերմունքների դրսևորմանը. կենդանի խոսքն է որոշում նրա գրային պատկերը:

Ծանոթագրություններ

1. Ա. Բակունց, Երկեր, Երևան, 1986 /բոլոր օրինակները սույն աղբյուրից են/:
2. Տե՛ս Մ. Ասատրյան, Ժ. հ. լ., Շարահյուս., Երևան, 1987, էջ 194: